

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետև՝ Տեսչական մարմին) դեղերի շրջանառության վերահսկողության վարչությունը (այսուհետև՝ Վարչություն) Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներից է:
2. Վարչության կանոնադրությունը հաստատում է Տեսչական մարմնի ղեկավարը:
3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեսչական մարմինների մասին» օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, Տեսչական մարմնի կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության գործունեության հիմնական նպատակն է՝
 - 1) օրենքով սահմանված դեպքերում և կարգով դեղերի շրջանառության ոլորտում անվտանգության և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:
5. Վարչության գործունեության հիմնական խնդիրներն են՝
 - 1) դեղերի շրջանառության ոլորտում ռիսկերի կառավարումը,
 - 2) դեղերի շրջանառության ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

3) դեղերի շրջանառության ոլորտում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության գործառույթներն ուղղված են սույն կանոնադրությամբ սահմանված նպատակի և խնդիրների իրագործմանը:

7. Վարչությունն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) «Դեղերի մասին» օրենքով նախատեսված՝ իր իրավասության սահմաններում դեղերի շրջանառության նկատմամբ վերահսկողության իրականացումը, մասնավորապես՝

ա. տնտեսավարող սուբյեկտների կողմից դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենքների և դրանց համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողության, ներառյալ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով ստուգումների իրականացումը,

բ. դեղեր ներմուծող և արտահանող, դեղատնային գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից գովազդի մասին օրենսդրության կատարման նկատմամբ ստուգումների, վարչական վարույթների իրականացումը,

գ. դեղի ստեղծման, նախակլինիկական հետազոտության, կլինիկական փորձարկման, արտադրության, պատրաստման, դեղաբուսական հումքի մշակման, ներմուծման, արտահանման, փոխադրման, պահպանման, իրացման, բաշխման, կիրառման, տեղեկատվության տարածման, ոչնչացման նկատմամբ վերահսկողությունը,

2) իր իրավասության շրջանակներում իրականացվող ստուգումների արդյունքներով բացահայտված խախտումների վերաբերյալ օրենքով սահմանված դեպքերում պարտադիր կատարման հանձնարարականների կազմում՝ սահմանելով ժամկետներ դրանց վերացման համար.

- 3) իր իրավասության սահմաններում իրականացվող վերահսկողության արդյունքում հայտնաբերված «Լիցենզավորման մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների և պայմանների խախտումների վերաբերյալ ֆիզիկական և իրավաբանական անձանց տրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու կամ դրանց գործողությունը կասեցնելու միջնորդագրերի կազմելու աշխատանքների ապահովումը՝ լիցենզավորող մարմիններին ներկայացնելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների և պայմանների խախտումների վերաբերյալ միջնորդագրեր կազմելու աշխատանքների ապահովումը՝ թույլտվություն տրամադրող մարմիններին ներկայացնելու նպատակով.
- 4) «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ իր իրավասության սահմաններում վերահսկողության իրականացումը ծխախոտային արտադրատեսակների կամ դրանց պատկանելիքների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նպատակով օգտագործվող փոխարինիչներից) և (կամ) ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի կանոնների, գովազդի, իրացման (վաճառքի) խթանման արգելքի ու սահմանափակումների, ինչպես նաև օգտագործման սահմանափակումների ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պահանջների կատարման նկատմամբ,
- 5) «Նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողության իրականացումը,
- 6) իր լիազորությունների շրջանակում բացահայտված՝ օրենքով չարգելված տեղեկատվության փոխանակում տեսչական և այլ պետական մարմինների հետ՝ վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով,
- 7) Տեսչական մարմնի տարածքային կենտրոնների դեղերի շրջանառության վերահսկողության բաժինների աշխատանքների մեթոդական ապահովում.

- 8) Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր նախապատրաստել, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր մշակել.
- 9) դեղերի շրջանառության ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման հայտնաբերման դեպքում օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառման առաջարկություն ներկայացնել.
- 10) դեղերի շրջանառության վերահսկողության ոլորտի գործունեության տարեկան ծրագրերի և Վարչության աշխատանքային ծրագրերի ներկայացում,
- 11) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Վարչությունը կառավարում է Տեսչական մարմնի ղեկավարը:
9. Վարչությունը գործում է Վարչության պետի անմիջական ղեկավարությամբ:
10. Վարչության պետն անմիջական հաշվետու է Տեսչական մարմնի ղեկավարին:
11. Վարչության կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Տեսչական մարմնի ղեկավարը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ներառված չեն ներքին կառուցվածքային միավորներ: